

Գ Ա Ր Ա Չ Ի Ն Ա Ր

Է Ի

Ի Կ Ի Ր Մ Ի Տ Է Օ Ր Թ

Խ. Բ. Գ. Ս. Յարդար-Սեան Արարատ ամսագրոյ.

Յայս ամի յաղագս անձնական պիտոյից իմոց պատահեալ ի գեղջն Ղարաչինարու Ղարապաղու գաւառի, տեսի անդ յեկեղեցիս նոցա ի տօնի Ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անսովոր և անշարկապ արարողութիւնս ժամերգութեան. վասն այն ցաւալի տեսութեան բարկացեալ մեր . . . պատմեցին ժողովրդականք, թէ յաւէժ և սովորաբար այդպէս է, և ոչ պատահմամբ. ստուգելով աւաղ կարգացի, զի ոչ վայելէր երից միաբան նորընծայ Քահանայից այնպիսի շարունակութիւնս ժամերգութեան.

Յետ այնորիկ շրջելով ի շրջակայ գիւղորայս Եկիրմիտօրտու, առհասարակ տրտունջս լսէի ի տեղական գործակալաց և յակնաւոր իշխանաց, իբր թէ՛ նոքա են պատճառն տղիտութեան իւրեանց և մանկանց վիճակի նորին. պատմեն թէ՛ գործակալք մեր կարի աչալուրջ և արագահաս են առ ի ժողովման դրամոց ուխտատեղեաց մերոց, և ս առաւել յօգուտ որոց և այրեաց և յօգուտ հոգեւոր ուսումնարանի Շուշոյ քաղաքի, ի ծանրարեոնեալ և ի տաժանեալ խղճալի յորոց և յաղքատ ռամիկ ժողովրդականացս մերոց ըստ ռամկաց որք ասեն՝ թէ իւրդն տանու՛մ են դմակն քսում, ասացէք խնդրեմք՝ մի՞ թէ այրիք մեր և ընպարտական են նոցա այսինքն Շուշոյ քաղաքի յղիացեալ ժողովրդականաց, որք իբրև զկերակուրս հացի ուտեն զմեզ:

Հաւաստի զի՛ ի 1855 թուականէն մինչ ցայս 1871 թիւ Եկիրմիտօրտ (24) գիւղօրէից ժողովեալ յօգուտ ուսումնարանի և ընդրամքը կրէք չպիտոյացան մանկանց մերոց. մեք զրկեալ զոլով միանգամայն ի ճառագայթից արեգական, առ դրան նստեալ կեամք զցայդ և զցեբրեկ չիք որ զբանս մեր պատմեցէ յակննջս Բարձրաստիճան Հոգեւոր Վառապարութեան:

Հասարակութիւնք Հայոց իշխալ Եկիրմիտօրտու թուով են 1000 տուն, ի հնումն համարեալ

առանձին տէրութիւն, եկեալ իսկ ի կողմանէ Տփիսիսայ և այժմ՝ բնակին ի կայուածս Հայազն մեղիբաց. մերձ ի Գանձակ մինչ ցկէս աւուր ճանապարհ, իսկ ի քաղաքէն Շուշոյ երից աւուրց հեռաւորութեամբ, վասն այն դժուարանան տանել անդ զմանկուս իւրեանց, և հօգալ զկարեւոր պիտոյս նոցա վասն ուսումնատութեան և այլ արհեստից:

Աստի յայտնելով նորին Ա. Ե. Հայրապետին մերոյ Տեառն և Տեառն Գէորգայ Գ. Վաթողիկոսի ամենայն Հայոց, որ միահամուռ աղաչեսցուք և խնդրեսցուք, զի բարեհաճեսցէ հրամայել բանալոյ ի գեղջն Ղարաչինարու ըստ տեղոյն ուսումնարան մի, որոյ մերձ են շրջակայ գիւղօրայքն Եկիրմիտօրտու և հին բնակչաց որք են աւելի քան զերեք հարիւր տունս, այնու միսիթարել զազգս և պայծառացուցանել զեկեղեցիս նորին:

Խ. Մ. Տ. Յարդար-Սեան

1871 թ.

Ի Գ. Ե. Ս. Յ.

Յ. Գ. Եկիրմիտօրտու վիճակի քահանայքն 22 ից աւելի են և Արարատ ամսագրոյ յաղագաւ ամեն մէկն տուել է 4 ռուբլի, բայց թէ Արարատ ամսագիրն ի՞նչ տեսակ բան է, և ի՞նչ ձև ունի, նոյն ողորմելիք դեռ և ս չեն տեսած:

(Որոց անկէ՛ նոցա ուշադրութիւնը կը հրաւիրեմք սոյն այս գրութեան վերայ. և կը յուսամք որ երկու կողմանց դժգոհութեանց և վնասուց աւելի և ս տեղիք չը տալոյ համար պէտք եղածները փութով կը անօրինեն . . . :)

Հ Ո Ղ . Գ Պ Ր Ո Յ
Ա Շ Տ Ա Ր Ա Կ Ա Յ .

Խ. Բ. Գ. Ս. Յարդար-Սեան Արարատ ամսագրոյ.

Ի՞՞մ համարեակիչ Աշտարակեցի եղբարց մի քանի գործեր՝ այսօր շարժառիթ են լինում իմ գրչիս հ/տեւեալ հ/ստրբբրական տուրբը գրելու

որոնք շատերին ուրախութեան անշուշտ պատ-
ճառ լինելուն հաւատարի եմ. ուրեմն թող բարե-
հաճի խմբագրութիւնի՝ իր պատուական լրագրի
մի անկիւնում տեղ շնորհելու այս իմ տողերիս:

Քասաղ գետը իր ընթացքը գետ ի արեւմուտք
դարձուցած տեղում, իր հիւսիսային ձորափանց
վերայ, կը տարածէ իմ հայրենիք համարուած
Աշտարակ գիւղը. այս տեղ, իր օղի բարեխառ-
նութեամբ և իր եռակողմ շրջապատած պարտեզ-
ներով ու այգիներով, զուարճալի տեսարան մը
կ'ներկայացնէ. այս գիւղը ուրիշներէ հետ համեմա-
տութեամբ իր բազմամարդութեան կողմանէ՝ դիւ-
ղաբաղաք կոչուելու իրաւունք ունի. և բնակիչք,
որոնք այգեգործութեան և ուրիշ աշխատութիւ-
ներու համար եռանդուն են և անխոնջ, իսկ ուս-
մունք և բարոյական կրթութիւն ունենալու և
որդիք դաստիարակելու համար անխոյժ. այս հա-
սարակութիւն իւր շրջանի մէջ ոչինչ օրինաւոր և
ուսման վերաբերելի մէկ ընթացք կամ շարժումն
չէր ունեցել, թէպէտ ժամանակ առ ժամանակ
երևացել էին մի քանի տղայք ժողոված և մի
տիրացուի կամ Տէրտէրի խնամոց յանձնած. սա-
կայն մի հաստատ հիմք չունենալով իւր պակաս-
ած ճրագի նման՝ շուտով անցել էին, դարձեալ
տգիտութեան մութը տիրապետել էր: Ահ, իմ
սիրտը որ մի զգայուն սիրտ էր, ուրիշ տեղերում
ուսումնասիրական շարժումներ և բարեկիրթ դաս-
տիարակութեանց հսկայաքայլ առաջադիմութիւ-
ներու ձայները կ'լսէր, և իմ հայրենակցաց վատ
և անարդիլ ծուլութիւնը կ'նկատէր, կ'մաշուէր,
կ'հառաչէր, բայց ձայնս ոչ ոք չէր լսել. իմ կայ-
տառ հասակին, որ բնական էր խիտ, ծիծաղ,
պար, երգ, ամենն ալ անհետացած էին, և օրէցօր
տխրութիւն կուրծքիս մէջ սնանելով մերամախձու-
թեան կ'փոխուէր, մինչև անցեալ 1867 թուի
հոկտեմբեր, որ Շահազիզեանց Պարոն Իսրայէլի
ջանասիրութեամբ, Աստուածածին Եկեղեցւոյ պա-
րսպի մէջ յանուն Աստուծարանի սենեակներ շի-
նուեցան և գիւղի հրապարակներում անկիրթ վա-
րուց մէջ թափառող երեխայք՝ այնտեղ ժողո-
վեցան հարիւրից հինգն միայն, և յիշեալ Շա-
հազիզեանի հրաւիրանոց Արժանագով Պարոն Ա-
ւետիք Արամեանը ուսուցիչ բերվեցաւ. տեախ, և

մի փոքր ուրախութեան ժպիտներ ցոլացին երեսնե-
րուս վերայ. գործը յաջողութիւն ունենալով դեռ
ինն ամիս շարունակած, Քաղ. Պաշտօնատար Մե-
ծայարգ Գէորգ Խանաղեանցի թելագրութեամբ մի
քանի ազնիւ Պարոններ՝ որք են Ա. ասիլ Կամսարա-
կան, Մարկոս Բօլօխանեանց և Պերճ Պոօջեանց,
իրենց խումբերով այս նորատունկ Աստուծարա-
նին Բարերարք հանդիսացան. վասն զի իրենց զը-
րամական նուէրքը առատապէս տալուց յետոյ, մի
քանի մոլեխիկն ածանց հակառակութիւններ խա-
ղաղացուցին, և բոլոր հասարակութեան կողմանէ
քսան անձինք երեցփոխանք ընտրել առաջարկե-
ցին. որոնցից չորսը Հոգաբարձու որոշվեցան՝ որք
են յիշեալ Իսրայէլ Շահազիզեանց, Յօհաննէս
Յարութիւնեան, Յօհաննէս Ազատեանց, և Ալէք-
սան Մակարեանը, սորանց հետ և Սարգիս Շու-
խեանց Տեսուչ Աստուծարանի*): Յիշեալ հոգա-
բարձու Պարոնները յիրաւի մեծապէս շնորհակա-
լութեան և գոհութեան արժանի են. որովհետեւ
սկսեալ 15էն Սեպտեմբերի 1868 թուականի ց 15ն
Մարտի այսր ամի զանազան անընչան և մութ ան-
պիշներէց 1530 մանէթ պատրաստի գումար գո-
յացուցել են յանուն Աստուծարանի. եթէ ան-
նրկատ հասարակութիւնը չզրկէ այն գումարը իրեն
Աստուծարանական անունից, արդէն հաւարակու-
թեան մի քանի անդամներէ կ'քաշուտուի ողորմելի
գումարն: Ա. ասն զի տգիտութիւնը իրեննիզակա-
կից աննելով ատելութիւն և նախանձը առաջնոր-
դումէ մի մեծ ամբոխի, և կուլումէ գիտութեան և
սիրոյ հետ. եթէ առաջնոյն յաջողէ է, անտարա-
կոյս անկանգնելի ընկճելուէ հոգաբարձութեան
արդիւնքը մի անյատակ խորխորատի մէջ գահա-
վիժելով զայն:

Դառն ողբոց արժանի է այս իմ անագորոյն
հայրենակցաց ընթացքը և սառն հայեացքը դէ-
պի ուսմունք, և շիմ՝ կրնալ առանց ցաւելոյ ա-
սել, վասն զի այն ամեն Աշտարակեցի անհաս-
ններ, որոնք մանկակա՛ն հասակում հեռացել են
իրենց տանից, և աւելի իրենց հարց Աստուծա-

(*) Երբն Ա. հեռափառութեան Արրազնաստրը Գէ-
որգ Կոթուղիկոսի պաշտելի Կոնդակու հաստատուած
է Հոգաբարձութիւնը եւ Տնչուծիւնն:

տեաց խօսքերից, և օտար տեղերում ուսանելով, ըստ կարի առաջադէմ են եղել, իսկ մնացածներ, որոնք Օխական Աւսումնարանում պարապելով փոքր ի շատէ բան սովորելու են, ամենեկին ոչինչ յուսալ կարելի չէ, ընչու որ հայրեր, որոնք վարձք տալով իրենց որդիք Աւսումնարան են ուղարկում, նոքա պարտական են ամեն ժամանակ հսկել իրենց որդեոց կեանքի վերայ. յորդորեն, ստիպեն, և ուսման յարգը դովելով շարունակեն իրանց որդեոց երթեւեկը. սրա հակառակ, նոքա ամեն գաղափոխում դատարկարանութեամբ կ'ըամրասեն և կ'արհամարհեն ուսմունք, հոգաբարձուի մի շնչին թերութեան համար, կանարգեն Աւսումնարան, և գեղջկական խոշոս բառերով կ'մերժեն զրել կարգալ. երբ մէկը, եթէ պատահի, իր նախանձից շարժվելով կ'չարախօսէ ուսմունքի համար, նորան միաբանողներ անթիւ են. և աւելի ցաւալին այս վերջինը ստէպ տեղիք է ունենում դատարկ խօսակցութեանց մէջ այն փափկասիրտ իրելեքանց կշտին ամեն ժամանակ այդանելով կրամրասեն ուսմունք, մի առանձին սառնութիւն կամ լաւ և սասկ, ատկութիւն գեպի ուսմանք կ'ծնուցանեն և կ'ծնուցանեն նոցա յիշողականութեան և սրտի մէջ. այս ամեն, իրենց տղիտութեան և անուսումնասէր բարուց դառն հետեանքներն են վերջապէս. եթէ հասարակութիւն ճանաչէ իր օգուտը և այն հիմնադիր բարերարաց սահմանադրութիւնը, բարեջան սրտով հաստատուն պահէ նորա հիմունքը, քիչ տարիներից յետոյ պիտի տեսնէ անտարակոյս նորա ներկայացրած մեծակշիռ գումարը, և զարմանալով ուրախանալու է:

Թողնելով ուսումնարանի արտաքին վարչութիւնը, ուղղահայեաց աչքով կ'նկատէի ներքին ուսումնական մասը, որ յիշեալ Պարոն Արամեանցի աշխատասիրութեամբ այնքան յառաջանումէր ուսմունքը, որ իրօք Աշտարակու ոսկեգարն համարվելու էր զայն. վասն զի Աշխարհագրութիւն, Ագրոպային պատմութիւն, թուարանութիւն և ուրիշ առարկայք՝ Արամեանցի մատակարարութեամբ կ'ընդունէր ուսանողաց խումբը. մինչև ցայսօր Աշտարակում աւանդեալ ուսմունք էր, Սաղմոս, Ժամայիրք, Շարական, և աւելի գերագանցն Քերականութիւն, և այս յետինն էլ մի մարդ գիտէր

կամ դժուարաւ երկու՝ բարեմն ըստ ասացելոյն, նա և այն իմաստութիւն է ճանաչել թէ յուսմէ է շնորհս. չեմ կարող զլանալ նորա ջանք և աշխատութիւն գէպի իւր աշակերտներ, և իմ կողմից ճշմարտութիւն անուրանալի է, առ այժմ այս համառօտ տեղեկութիւն իմ հայրենեացս վրայ յօք թող բաւական համարուի, բարի ապագայի մը սպասելով:

Ս Բ Ի Ն Ս Ե Ռ Ի Յ Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Ի 22² Փետրվորի 1871 - Դ
ՍԱՆՏՊԵՏ

Վ Ե Բ Ի Ն Ա Գ Ո Ւ Լ Ե Ը Ց

Կ Բ Կ Ի Ն Ս Ե Ռ Ի Յ Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն Ն Ե Ր

Երկար ժամանակաց ի վեր՝ Ագուլեաց Հայազգի ժողովրդոց մէջը բնակելով՝ փոքր ի շատէ տեղեկութիւն ունեցանք նոցա բարոյականապէս նպատակներին. յիբաւի գովութեան արժանաւոր է միանգամայն և նախանձիլի նոցա մեծագոյն մասի արդի ունեցած ուսումնասիրութեան ազնիւ զգացմունքը, որոնք իրանց ունեցած նիւթական կարողութեան համեմատ՝ ցանկանում են և իրանց հայրենեաց որդեոց բարոյական և մտաւորական զարգացման. բաւական չը համարելով իրանց որդեոց համար արական սեռի ուսումնարան՝ ապագայ սերնդի բարոյագէտ, ուսեալ, և կրթեալ մայրեր պատրաստելու նպատակաւ՝ ունեցան և մի Օրիորդաց ուսումնարան. և այս ուսումնարանաց հիմնական կերպով շարունակութեան համար՝ քանի ինչ հայրենասէր անձանց զօհարեութեամբ հանգանակեցին իրանց միջից բաւական դրամագլուխ. և բացմանց հանդէսն էլ կատարեցաւ անցեալ 1867 ամի Հոկտ. 20 ին, մեր Վեհափառ Տ. Տ. Գեորգայ Դ. Սրբազնագոյն Վաթիկանի պատուական Առնդակներովը. և նոյն օրից սկսած՝ շարունակվում է մինչև ցարդ, բոլոր տարարագրարար ամեն տարի զրեթէ ննթարկուած դանազան տեսակ մեթոտներով դասատու վարժապետների փոփոխութեանց առանց որ և իցէ հաստա-